

Վստահ ենք որ Մատենադարանին տրված նորոգումները ժամանակի ընթացքին, եւ միջոցառման մեծ պահանջը, պիտի հրատարակէ աւելի խնամեալ եւ հայունակ լեզուով խմբագրեալ առաջնորդող մը, եւ մեզի պիտի տայ ցարդ անձանոթ մնացած մանրանկարչական գլուխ գործոցներ, որոնցմով աշխարհը հարուստ է Մատենադարանը:

* * *

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՆ ԵՐԶՆԿԱՅԻ – ՏԱՂԵՐ – Աշխատասիրեց Տիկին Արմենուհի Սրապեան: Լաքակազմ, ութածալ, էջ 300: Երեւան, 1962:

Շնորհալի բանասիրուհին լաւ գործ մը կատարած է հրատարակելով այս խնամեալ հատորը: 1905ի Վենետիկեան հրատարակութիւնը արդէն հազիւ կարելի է գտնել: Ներկայ աշխատութիւնը կը բաղկանայ երեք գլխաւոր մասերէ: Նախ կը տրուի Ուսումնասիրութիւն, յետոյ Բնագրեր եւ վերջապէս Ծանոթագրութիւններ: Գրանկ եւայլն կ'ամբողջացնեն գործը: Էջ 5-7 ունի Յառաջաբան մը, ուր կը տրուին ցարդ կատարուած հրատարակութիւնները՝ Կոստանդինի տաղերուն եւ Կոստանդինի մասին կատարուած հետազոտութիւններուն:

Էջ 17 կը տրուի քառեակ մը, որ կը վերադրուի Թորոս ԵՐԶՆԿԱՅԻ մը, անշուշտ տաղասաց: Խնդրոյ նիւթ քառեակը առնուած է տաղէ մը՝ որուն մէկ օրինակը եւ հրատարակեցի ԵՐԻՉԱ ԵՒ ԵԿԵՂԵԱՅ ԳԱՒԱՍ ԳՈՐԾԻԱ Ա. հատորին մէջ (Վեներիկ, 1953) էջ 139: Սակայն այս տաղը Թորոս ՏԱՐՕՆՅԻ հեղինակութիւնն է: Թորոս ԵՐԶՆԿԱՅԻ տաղասաց մը արդէն ծանօթ է:

Էջ 18 Երզնկայի Ս. Փրկիչ եկեղեցին 1269ին կառուցուած կը նշանակուի, մինչ արդէն 1266ին անոր հովանաւորութեան տակ զբաղեցնէր զրուած եւ ու մեզի հասած:

Էջ 18 Սարգիս արքեպիսկոպոսի եւ իր

Յովհաննէս Իշխան որդւոյն նահատակութիւնը 1279ին կը զրուի, որ սխալ է. պէտք է 1276 նշանակել: 1279 թուականը եւ անոր հետ կապուած թաթար եւ սելջուք պատերազմի հէքեաթը լոկ Չամչեանի կատարած հետեւութեան արդիւնքն է, եւ ոչ թէ պատմական իրականութիւն: Հ. Չամչեան պարզապէս դէպքեր եւ թուականներ իրարու հետ չիփթած է:

Պատմական-ժամանակագրական աշխարհի մը մասնը ու աննշան ճշտումները բնական է ոչինչ կը պակսեցնեն Տիկին Սրապեանի մեծապէս գնահատելի գործէն: Ինքն ալ ծաղումով Երզնկացի, ներքաղցաց, եռանդուն, իր բոլոր խանդավառութեամբ կը վերլուծէ, կը ներկայացնէ սիրոյ մեր առաջին երգիչը, անմահ եւ անուշադական Կոստանդին Երզնկացին: Արդարեւ Հ. Մկրտիչ Վ. Պոստոբեանի ներկայացումէն ու գեղապէս Արշակ Զօպանեանի վերլուծումներէն ետքը՝ Տիկին Սրապեանի սիրազեղ ու քնքուշ նկատողութիւններով նոր փայլ ու հրապոյր կը զգենու Կոստանդին Երզնկացի. այսպէս, լոյս եւ հոգի, սէր ու զգացում կը վերածնին Արմենուհիի նուրբ գրչին տակ:

Որքան մեծ հոգեկան բարիք պիտի ըլլար տարածել ու ժողովրդականացնել մեր այս գմայլելի, հոգեթով բանաստեղծը, Կոստանդին Երզնկացին, Հայոց անուշադական Օմար Սալամը: Իր հոգեբուխ, զբաւիչ լեզուն, խորիմաստ պատկերները, սիրազեղ յոյզերը... մեր նոր սերունդին հոգին պիտի ազնուացնեն, զիրենք հպարտութեամբ պիտի լեցնեն՝ Հայ ըլլալուն համար, Կոստանդին Երզնկացիին ազգակից:

Գործին բնագրական մասը կը սկսի էջ 103ով: Կը հրատարակուին Կոստանդինի բոլոր տաղերը:

Արդարեւ Տիկին Արմենուհի Սրապեան ցարդ Կոստանդին Երզնկացիի մասին գիտցուածին վրայ ոչինչ նորութիւն կ'աւելցնէ: Կենսագրական մասը կը մնայ ինչպէս որ էր, եւ տաղերուն վրայ ոչ մէկ անտիպ տաղ աւելցուած կը գտնենք:

Այսուհանդերձ ինչ որ կատարած է Հայ գիտնականուհին՝ լաւ եւ զիտական կերպով կատարած է: Մենք երախտապարտ ենք իրեն՝ Կոստանդին Երզնկացիի յիշատակը վերստին թարմացուցած ըլլալուն համար, մեր օրերուն:

Գործին վերջը Յ. Ս. Անասեան, մեր անուշադական մատենագէտը, կու տայ Կոստանդին Երզնկացիի մատենագիտութիւնը: Ասկէ վերջ կը տրուի ամենակենսական բառարան:

Վերադարձութեամբ չէ սրբազրուած վրիպակ մը էջ 13, ուր 1238 պէտք է ըլլայ 1338:

Մեր սրտագին շնորհակալութիւնը կըրկին Տիկին Արմենուհի Սրապեանին եւ Երեւանի Գրականութեան Հաստատութեան՝ այս արժէքաւոր հրատարակութեան համար:

* * *

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՏԻՈՅ – Աշխատասիրութեամբ Կ. Ն. Իւզբաշեանի: Մեծ ութածալ, լաքակազմ, էջ 160, Երեւան, 1963:

Իւզբաշեան Պատմութեան սկիզբը ունի Առաջաբան մը մինչեւ էջ 17, ուր կը լինի որ Լատիվերտացոյ պատմութիւնը կը պարունակէ 1000 թուականէն մինչեւ 1071, իրապէս կարճ ժամանակաշրջան մը, եւ սակայն մեծարժէք աղբիւր է մեր պատմութեան այդ շրջանին համար:

Լատիվերտացիի մասին մեզի հասած տեղեկութիւնները շատ թուովաւ են: Գրեթէ որեւէ բան չենք գիտեր կենսագրական կերպով, ոչ ծնունդ, ոչ մահ, ոչինչ: Իր նկարագրի մասին ինչ որ գիտենք իր Պատմութիւնէն է: Իւզբաշեան զայն գլխաւորաբար յուշատեղեկութեամբ արտայայտուող կը նկատէ: Ինծի համար Լատիվերտացիի եղբայրը ու մըն է, մեր հայրենիքին եւ ժողովրդին սելջուքներու սկզբնական արշաւանքներէն կրած մար-

տիրոսութեան կենդանի եղբերդուն, ատելալաւ եւ վրէժխնդիր: Անիկա երբեմն ծայրայեղ կ'արտայայտուի եւ ուշադիր չ'ըլլար որ իր եղբորական հոգեվիճակը հակասութիւններ կը մտցնէ իր պատմագրութեան մէջ: Օրինակ ԺԸ գլխուն մէջ (առաջ էջ 107) սարսաղեղեցիկ կերպով Երիզայի եւ Նիկեացի գաւառի կոտորումը պատմելով կ'ըսէ «մինչեւ չմնալ կենդանուոյ ուրուք ի մարդկանէ» եւ իր նկարագրութիւնն ալ կը համոզէ ընթերցողը: Սակայն քանի մը էջ անդին (էջ 117) կը նկարագրէ տարի մը վերջ կատարուած երկրորդ արշաւանք մը որուն զոհ զնաց Մելիտինէ (Մալթիա) եւ արեւան ծառի թշնամիները դարձեալ կը դիմէին Նիկեացի գաւառ, ուր կարծես հրաշքով «ժողովեցան բազում զօրք աղեղնաւորացն եւ կալան զկիրճս ճանապարհին» արդիւնքով անոնց յառաջացումը:

Լատիվերտացոյ Պատմութիւնը առաջին անգամ լոյս տեսաւ Սուրբ Ղազարի տպարանէն 1844ին եւ երկրորդ հրատարակութեան արժանացաւ 1901ին, իսկ 1912ին Թիֆլիս հրատարակուեցաւ Ղուկասեան Մատենադարանի շարքին մէջ:

Իւզբաշեան «Հոյակապ ոճարան» կը կոչէ Լատիվերտացին եւ իրաւամբ: Ան ներկայ հրատարակութիւնը կատարած է 10 զբաղեցրնելու համեմատութեամբ ինչպէս նաեւ Ս. Ղազարի տպագրութեան: Գրչագիրներէն գլխաւորը Մատենադարանի թիւ 2865ն է որ 1557 թուին նորոգուած է: Միւս զբաղեցրնելն են Մատենադարանի թիւ 3160 (Ժէ գար), 3502 (1658էն), 3070 (1669), 1482 (1678էն), 4584 (1668էն), միւսները ԺԹ գարու: Զարմանալի է որ կը պակսի իրապէս հին օրինակ մը:

Իւզբաշեան յաջող կերպով կատարած է այս համահաւաք քննութեամբ հրատարակութիւնը եւ մենք խորապէս շնորհակալ ենք իր խնամեալ աշխատանքին եւ Լատիվերտացիի քիչ շատ վստահելի բերանագրի մը մեր տրամադրութեան տակ զնկուն համար:

Իւղրաշեան լաւ դործ մը զիտական տա-
րադով ընտիր կերպով կատարած է իր
այս աշխատանքով:

* * *

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ – ՏԱՂԱՐԱՆ –
Աշխատասիրութեամբ Շուշանիկ Նա-
գարեանի: Փոքրածալ, լաթակազմ, 150
էջ, 1 լուսատիպ նկար: Երեւան, 1962:

Շնորհալի աշխատասիրողին այս հա-
տորիկն ալ կարեւոր տեղ մը կը դրաւ
մեր հին բանաստեղծութեանց նուիրուած
ընտիր հատորներու կարգին: Տիկին Նա-
գարեան կրցեր է միշտ ո՛չ միայն մոռա-
ցութեան փրկել, այլ եւ անուրանալի
կարողութեամբ յայտնաբերել մեր հին
բանաստեղծներուն ոգին:

Յովհաննէս Կարնեցի ո՛չ շատ հին եւ
ո՛չ ալ շատ ծանօթ մեր բանաստեղծնե-
րէն է, ինչպէս օրինակ Կոստանդին Եր-
զնկացին, Սաչատուր Կեչառեցին, Յով-
հաննէս Թրիւրանցին, Գրիգորիս Այթա-
մարցին, եւայլն: Սակայն անուրանալի
բանաստեղծական ոգի մը ունեցող է, որ
կ'արժէր կորզուէր անյիշատակ մնացած-
ներուն շարքէն:

Տիկին Նագարեան անոր ծննդեան թը-
ւականը կը դնէ 1750ի տեսնները եւ մա-
հը 1820ական թուականներուն. ամէն
պարագայի տակ Յով. Կարնեցիի մասին
կենսագրական ծանօթութիւնները քիչ
են: Ան եղեր է մանկավարժ, գրիչ, որմէ
տասնեակ զբոսները կը գտնուին Ե-
րեւանի Մատենադարանը: Հետաքրքրա-
կան է որ Կարին ԺԸ. դարու վերջ եւ Ի.
դարու սկիզբը ունեցեր է զբաղմունքներ
մշակութային շարժում: Կը յիշուին Մով-
սէս վարժապետ եւ աշակերտը Սարգիս,
եւ ասոր ալ աշակերտը Մարգար, որոնք
զբաղեր են ոչ միայն գրչութեամբ, այլ
նաեւ կարող մանրանկարիչներ էին:

Տիկին Նագարեան ուշագիւր չէ եղեր,
որ Յով. Կարնեցի 1810էն առաջ եւ 1808էն

վերջ երուսաղէմ ուխտի զայցած է, եւ
1810էն վերջ իր տաղերուն յիշատակա-
րաններուն մէջ ինքզինքը կը կոչէ Մա-
տեաի, որ տիտղոսն էր Երուսաղէմ ուխ-
տի զայցողներուն: Իր մասին կը յիշէ
Մկրտիչ Սրբ. Աղաւնունի իր ՄԻԱՅԱՆՔ
ԵՒ ԱՅՅԵԼՈՒՔ (Սաղմի) գործին մէջ:

Տիկին Նագարեան մեղի կու տայ Յով.
Կարնեցիի տաղերէն ընտրուի 34 սիրոյ
տաղեր: Երգելու համար շինուած այս
տաղերը, բնական է, իբր բանաստեղծու-
թիւն՝ ընթերցման համար պակասութիւն-
ներ ունին: Այսուհանդերձ բանաստեղծա-
կան շնորհք եւ քնքուծութիւն առատօրէն
կ'երևայ Յով. Կարնեցիի տաղերուն մէջ:
Տիկին Նագարեանի ընտրութեանց մեծա-
դոյն մասը կատարելապէս յաջող է:

Գործը կ'աւարտի ծանօթագրութիւննե-
րով, բառարանով եւ ցանկով:

Շնորհալի զբաղիտուհիին զբէն վրի-
պեր են կոնկրետ, պոեմ, փանատիկ, լի-
րիկական, եւն. անհարազատութիւններ,
որոնք իր շուշանիկ հայերէնը տեղ տեղ
աղծատեր են, եւ իր հոսուն հայերէնին
մէջ ոչ-ակնհաս խութերու պէս մնացեր
են: Մտղթենք որ փոքր ճիւղով մը Շու-
շանիկ շուշանաթոյր պահէ իր եւ մեր
պաշտելի հայերէնը:

Հաճելի անակնկալ մը եղաւ էջ 23 թիւ
2 ծանօթութեան մէջ ըստաւր թէ «Մենք
նպատակ ունենք հրատարակութեան ներ-
կայացնել վկայարանական ընտիր երկե-
րի (տպագիր եւ անտիպ) մի ժողովածու՝
յատուկ ուսումնասիրութեամբ»: Մտղ-
թենք որ այս խիստ մեծ ու կարեւոր դոր-
ծը կատարուի եւ հրատարակուի: Կրօ-
նական դործ մը չէ ասիկա, այլ պատմու-
թիւնները այն հերոսական հոգեկան եւ
բարոյական մարտնչման՝ դոր Հայը ա-
պրեցաւ ահռելի կորուստներով, անոպայ
եւ վայրենի տիրակալութեանց սարսափ-
ղեցիկ բռնութեան տակ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

«ԲԱԶՄԱՎԷՊ»Ի 120^{րդ} ՏԱՐԻՆ

Ձենք սիրեր յորեկաններ ու տարե-
դարձներ տօնել. կը նախընտրենք լուռ
աշխատանքով արդիւնաւորել ու նուիրա-
կանացնել այդ պատկառելի տարեթիւնե-
րը: Կը զգանք, սակայն, թէ ո՛րքան բար-
ձրանան սիւնակները նմանօրինակ թուա-
կաններու, այնքան կը բարդուին նաեւ
պարտականութիւնները. բայց ծերու-
թեան ալիքները երբեք չեն կրնար խեղ-
դել ու ջլատել թափը մեր ճիւղերուն, քա-
նի որ նորանոր ոյժեր, գիտակից իրենց
պատասխանատու դիրքերուն, նուիրուած
են լեցնելու շարքերը հիններուն, սրբազան
աւանդ մը առած իրենց ձեռքերուն մէջ,
Ալիշանի եւ նմաններու շունչով հոգիա-
ցած:

Մինչ ահա կը բոլորենք 120րդ տարին
մեր բազմամեայ հրատարակութեան, մեր
երախտադէտ զգացումները կը բարձրա-
նան նախ դէպի երամը լուսապսակ մեր
վաստակաւորներուն, ոգեկոչելու յիշա-
տակը անոնց՝ որ հայագիտական – դրա-
կան – զեղարուեստական մարզերու մէջ
անմահ ուսուցիչները դարձան, եւ իբրեւ
նոր համաստեղութիւն Միթրաբեան Կա-
ճառին՝ «Բազմավէպ»ի էջերէն աստղերու
նման լուսեղէն ցուրբ սփռեցին Ազրիա-
կանէն մինչեւ Վոսիոր ու Սեւան:

Երախտադիրութիւն անոնց հանդէպ,
որ հայրենի հնաւանդ սրբութիւններու
պաշտամունքով արբշիւ, աւերակներու
մամուլները մաքրեցին զոգոգողալին,
հաղարամեայ մազադաթներու բորբոսը
սրբեցին երկիւղածութեամբ, հնամենի
զբաղմունք ժանդը ջնջեցին մեծարանքով,
ու վերակառուցին հայկական փառքերը
դարաւոր. պատմութիւն, դրականու-
թիւն, զեղարուեստ:

Մէկ խօսքով, յարգանք ու երախտադի-

տութիւն անոնց հանդէպ՝ որ անդու ու
յարատեւ աշխատանքով զերեզմանային
խաւարէն կեանքի կոչեցին մեր ազգային
արժէքները ու պատրաստեցին այսօրուան
փառաւոր յարութիւնը:

Բայց հին հայը նոր հայուն լաւագոյն
կերպով ճանչցնելու համար, նոր ճամ-
բայ մըն ալ բացին անոնք. ճանչցնել հա-
յուն նաեւ օտարը, հին ու նոր դրակա-
նութեանց ճաշակը արթնցնելով, տեղա-
դրական ու գիտական յառաջդիմութեան
հետաքրքրութիւնն ստեղծելով. ամբող-
ջացնելու համար, այսպէս, հայ մտքին
կազմաւորումը:

Յարգա՛նք ու երախտադիրութիւն ա-
նոնց խնկելի յիշատակին:

«Բազմավէպ» փակեց իր 120րդ տարին,
յարգանքի ու երախտադիրութեան դերա-
դոյն արտայայտութեամբ մը՝ հանդէպ
մեր զբերու ստեղծող Հացեկացի Ս. Մե-
սրոպ Մաշտոցին, տալով լաւագոյնը իր
ոյժերուն, բանասիրական ու գրական-
զեղարուեստական հանդերձի մը նկար-
չադեպ դոյներով: Եւ ի՛նչ աւելի մխիթա-
րական, քան շարունակել նոյն ուղղու-
թեամբ, գործնական անդու նուիրումով,
ի սպաս հայ մշակոյթին:

Մեր նշանաբանը նուիրում է. մեր յար-
գանքի ու երախտադիրութեան լաւագոյն
ցոյցը՝ այդ նուիրումին իրադրոժումը
յարատեւ:

Այս առիթով, Հայաստանի մշակութա-
յին Հաստատութիւններէն ստացանք շը-
նորհաւորական նամակներ. Երեւանի
թերթերէն ոմանք ուրախութեամբ յիշա-
տակեցին մեր նոր թուականը. արտա-
սահմանի մամուլին մէջ ալ արձագանգ
գտաւ իսկոյն այս տարեդարձը:

Սրտագին շնորհակալութիւն, յանուն